

4 Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, եւ կատարեալ գիրամանսն եւ առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային¹ ի կողմանս Յունաց, ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին:

5 Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ² դեպ լինէր ոմանց եղբարց ի Յայաստան աշխարհես, դիմել իջանել³ ի կողմանս Յունաց, որ եւ Ղեւոնդէս⁴ առաջնոյն անուն էր⁵, եւ երկրորդն⁶ Կորիւնս⁷, եւ մատուցեալ⁸ յարէին յԵզնիկն, իբրեւ առ ընտանեգոյն սննդակից՝ ի Կոստանդինական քաղաքին⁹, եւ անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն զիսնդիրն վճարէին: 6 Որոց¹⁰ յետ այնորիկ հաստատուն աւրինակաւք աստուածատուր գրոցն եւ բազում շնորհագիր հարց¹¹ յետ այնր¹² աւանդութեամբք, եւ Նիկիական եւ Եփեսոսական կանոնաւք, գային երեւելով աշխարհին Յայոց, եւ առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ:

7 Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ ի¹³ յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: 8 Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ¹⁴ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի¹⁵ զթարգմանութիւնս հաստատեր ճշմարիտ¹⁶ աւրինակաւք բերելովք¹⁷: 9 Եւ շատ եւս¹⁸ մեկնութիւն գրոց թարգմանէին¹⁹:

10 Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս²⁰ գրոց ծախէին հարքն՝ զտիւ եւ զգիշեր, եւ նովիմք ծաղկեալք եւ շահաւետեալք՝

1 *բ* գնացին

2 *բ* անցելոյ

3 *բ* դիմեալ իջանէր

4 *բ* Ղեւոնդէոս

5 *բ* անուանէր

6 *բ* երկրորդն / *միւսն*. երկրորդին

7 *bc* Կորիմինոս *փիս*. Կորիւնս

8 *բ* մատուցեալք

9 *bc* քաղաքէն

10 *բոլորը*՝ որոյ ուղղ. որոց

11 *bc* հայոց *փիս*. հարց

12 *bc* այն *փիս*. այնր

13 *բ* ի յունական / *միւսն*. չիք ի

14 *բոլորը*՝ Եզնակաւ / Ս Եզնկաւ

15 *ս* զփութանակի

16 *ս* ճշմարիտն

17 *բ* զճշմարիտ օրինօք բերելօք

18 *բ* շատ այլեւս

19 *բ* մեկնութիւն թարգմանէին գրոց

20 *bc* ընթերցուածոց